

## Մանրէասպաններու օգտագործումը ի՞նչպէս մանրէասպանի դիմադրութիւն կը պատճառէ

Երբ որ մանրէասպաններ օգտագործուին, մեր մարմիններուն մէջ բնակող անվնաս ցախկները կրնան դիմադրող դառնալ այս մանրէասպաններուն: Երբ ցախկները դիմադրողականութիւն զարգացնեն տարբեր տեսակի մանրէասպաններու դէմ, անոնք կը կոչուին բազմա-դիմակալ ցախկներ կամ «գերվարակներ»:

Գերվարակներու պատճառով առաջացած վարակները ատելի դժուար կը դարմանուին կամ կրնան անբուժելի ըլլալ:

Գերվարակներ կը պատճառեն.

- Վարակներ որոնք կրնան դարմանուիլ միայն ատելի ուժեղ մանրէասպաններով որոնք ատելի շատ կողմնակի ազդեցութիւններ եւ վտանգներ ունին
- Վարակներ որոնք կրնան դարմանուիլ միայն ներարկային մանրէասպաններով
- Վարակներ ուր չկան ազդեցիկ մանրէասպան դարմանում

Որոշ դիմացկուն ցախկներ կրնան նաեւ տարածուիլ տարեցներու խնամքի տան այլ բնակիչներուն:

## Հիմնական պատգամներ

- Մանրէասպանները թանկագին եւ ուժեղ դեղեր են
- Մանրէասպանները կրնան կողմնակի ազդեցութիւններ պատճառել եւ տարեց մարդիկ ատելի ենթակայ են ասոր
- Որոշ վարակներ կը լաւանան առանց մանրէասպաններու
- Մանրէասպաններու դիմադրութիւնը ցախկներու մէջ կը նշանակէ, թէ որոշ մանրէասպաններ կրնան չազդել ապագային

## Ի՞նչ ընել եթէ ես հարցումներ ունիմ մանրէասպաններու վերաբերեալ

Եթէ ձեր մանրէասպաններուն վերաբերեալ որեւէ հարցումներ ունիք խօսեցէք ձեր տարեցներու խնամքի տան անձնակազմին եւ բժիշկին հետ: Հարցուցէք.

- Ի՞նչ է այս մանրէասպանը: Ի՞նչ վիճակի համար կը պատուիրուի
- Իմ վիճակս կրնա՞յ լաւանալ առանց մանրէասպաններու
- Որեւէ քննութիւններ կատարած է՞ք վարակի ախտաճանաչման օգնելու համար: Արդիւնքները ե՞րբ մատչելի պիտի ըլլան
- Որեւէ այլ դարմանում եւ խնամք կը յանձնարարուի՞ն
- Ի՞նչ են այս մանրէասպանի վտանգները կամ կողմնակի ազդեցութիւնները
- Որքա՞ն ժամանակ պէտք է օգտագործեմ այս մանրէասպանը
- Մանրէասպանը օգտագործելու մասին որեւէ հրահանգ կա՞յ ապահովելու համար որ ան լաւ ազդէ (Որոշ մանրէասպաններ ատելի լաւ կ'ազդեն ուտելիքով, կամ պարապ ստամոքսով, կամ անջատուած այլ դեղերէ)
- Ան պիտի փոխազդէ՞ իմ այլ դեղերու հետ (օրինակ, որոշ մանրէասպաններ կրնան փոխազդել արիւն նօսրացնողներու հետ, ինչպէս օրինակ ուաֆրինի)
- Ինչպէ՞ս պիտի գիտնաք որ մանրէասպանը կ'ազդէ իմ վարակիս

Զեզի յանձնարարուած մանրէասպանին կամ ձեր վարակի մասին դուք կրնաք գրաւոր տեղեկութիւն խնդրել ձեր տարեցներու խնամքի տան անձնակազմէն կամ բժիշկէն:



Australian Government

Aged Care Quality and  
Safety Commission

Engage  
Empower  
Safeguard



## Մանրէասպաններու կարիք ունի՞ք

Տեղեկութիւն մանրէասպաններու մասին՝ տարեցներու խնամքի բնակիչներուն եւ անոնց ընտանիքներուն, խնամողներուն եւ ներկայացուցիչներուն համար:

1800 951 822

[agedcarequality.gov.au](http://agedcarequality.gov.au)



Մանրէասպաններու ատելի  
լաւ օգտագործում

# Ինչու՞ մանրէասպանները կարելուք են ձեզ համար

**Մանրէասպանները արժեքավոր եւ ուժեղ դեղեր են – եւ անոնք այնքոք է օգտագործուին միայն յատուկ նպատակներու համար:**

Անոնք կրնան օգտակար ըլլալ բազմաթիւ ցակային (պակտէրիական) վարակներու դէմ, ինչպէս օրինակ միզուղիի, մորթի եւ շնչառութեան դրութեան վարակներու: Անոնք կրնան կեանք փրկել լուրջ վարակներու պարագային, օրինակ՝ արեան վարակումի: Երբ մանրէասպանները անհրաժեշտ են, անոնց օգուտները կը գերազանցեն կողմնակի ազդեցութիւններու վտանգը եւ մանրէասպանի դիմակալութիւնը:

Սակայն մանրէասպանները **յաճախ չէ որ անհրաժեշտ են**: Անոնք երբ անհրաժեշտ չեն, չեն օգնէր ձեզ, եւ կողմնակի ազդեցութիւնները դեռ կրնան վնաս պատճառել եւ նպաստել մանրէասպանի դիմադրութեան:

## Մանրէասպանները ի՞նչ չեն բուժեր

- Ժահրերու պատճառով առաջացած շատ մը վերին շնչուղիներու վարակներ
- որոշ ցակային վարակներ, որոնք արագ կը լատանան, նոյնիսկ առանց մանրէասպաններու: Օրինակներ՝ ցնցղատապ, ծոցաբորբ (սայնըս) եւ ականջի վարակներ:
- անվնաս ցախկներ այնպիսի պարագաներու տակ, ուր չկան ախտանշաններ կամ վարակի նշաններ: Օրինակի համար՝ մեզին մէջ առանց ախտանշանի միզային մանրէ (մեզին մէջ անվնաս մանրէներու յայտնաբերում՝ մեզի ստուգիչ ցախկով քննութեան, կամ մեզի մշակման միջոցով), կամ չվարակուած մորթի վերքեր:
- երբ օգտագործուի վարակի կանխարգիլման համար (նախասպահանութիւն): Օրինակներ՝ ամիսներ շարունակ օգտագործուած մորթի հակասնկային քսուկներ, կամ, ամիսներով, երբեմն տարիներով օգտագործուած՝ բերանով առնուած մանրէասպաններ, որոնք սկսած են վարակի զարգացումը կանխելու նպատակով:

# Որո՞նք են մանրէասպաններու հաւանական կողմնակի ազդեցութիւններն ու վտանգները

**Մանրէասպաններու կողմնակի ազդեցութիւնները սովորական են, եւ տարեց մարդիկ աւելի ենթակայ են վտանգի: Սովորական կողմնակի ազդեցութիւններ են.**

- Ախորժակի կորուստ / ուտելու եւ խմելու նուազում
- Սրտխառնուք
- Փորհարութիւն
- Սնկային վարակներ, ինչպէս՝ տորդիկ
- Եռք

**Մանրէասպանները կրնան ունենալ նաեւ այլ, երբեմն աւելի լուրջ, կողմնակի ազդեցութիւններ եւ վտանգներ.**

- Կեանքի սպառնացող դիրագագացական հակազդեցութիւններ
- Մանրէասպաններու եւ այլ դեղերու միջեւ ներգործութիւն
- Մանրէասպանի դիմադրող ցախկով վարակներ, որովհետեւ մանրէասպանի ազդեցութիւնը կրնայ թոյլ տալ ձեր մարմնի ցախկներուն (ներառեալ անվնաս ցախկներուն) յարմարուիլ այնպէս, որ անոնք այլեւս չեն սպաննուիր մանրէասպանին կողմէ
- C. difficile (կամ C. diff) վարակ, որ աղիքներուն մէջի լաւ ցախկներուն մանրէասպաններու կողմէ ոչնչացումի պատճառով առաջացած ստամոքսաղիքային հիւանդութիւն է: C. diff վարակը կը պատճառէ որովայնի ցաւ սրտխառնուք եւ փորհարութիւն: Ան կրնայ լուրջ վնաս պատճառել աղիքներուն եւ կրնայ տարածուիլ ուրիշ մարդկանց: C. diff վարակի վտանգը ամիսներ կը տեւէ, նոյնիսկ մանրէասպաններու դադարեցումէն ետք:

Տարբերակներէն եօթը, տարեկան մէկ կամ աւելի մանրէասպանի շարք կը ստանայ: Այս շարքերէն որոշներ կրնան անհրաժեշտ չըլլալ: Եթէ բժիշկ մը կը ծրագրէ մանրէասպան պատուիրել ձեզի համար, խնդրեցէք իրմէ որ նախ բացատրէ թէ ինչու:

## Ի՞նչպէս կրնամ առողջ մնալ

**Դուք կրնաք առողջ մնալ եւ ուրիշները առողջ պահել.**

- Յաճախակի ձեռքի առողջապահութիւն կատարելով՝ արտաքնոց երթալէ ետք ձեռքերը օճառով եւ ջուրով լուսարկել եւ ուրիշներու դպչելէ կամ ուտելէ առաջ այլքոհլով պատրաստուած ձեռքի քսուկ օգտագործելով
- Առողջապահութեան մասնագէտներէն եւ այցելուներէն պահանջել որ նախքան ձեզի դպչիլը կամ ձեր վէրքը խնամելը մաքրեն իրենց ձեռքերը
- Ծածկելով ձեր հագը՝ կանխելու համար մանրէներու տարածումը
- Խնդրելով ընտանիքէն եւ բարեկամներէն չայցելել երբ լաւ չեն զգար
- Երբ հիւանդ էք՝ ձեր սենեակին մէջ մնալով
- Հարբուխի, ՔՈՎԻԾ-19-ի եւ թոքատապի պատուաստներ ստանալով դուք ձեզ պաշտպանել եւ քաջալերելով ձեր շուրջիները, որ նոյնը ընեն:

Այս մասին յաւելեալ տեղեկութեան համար, խօսեցէք ձեր տարեցներու խնամքի տան անձնակազմին եւ բժիշկին հետ:

**Դեղագիրներուն հինգէն մէկը վարակի կանխարգիլման համար է, եւ ասոնցմէ շատերը կրնան անհրաժեշտ չըլլալ:**

**Այսօր մանրէասպաններու խելացի օգտագործումը կ'ապահովէ որ վաղը մանրէասպանները ազդդեն:**